ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-9/28-1

ք. Երևան «06» հուլիսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Մ. Ղամբարյանի,** ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***10,664,910 (տասը միլիոն վեց հարյուր վաթսունչորս հազար ինը հարյուր տաս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից

հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան » ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 002182558001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ	ԱՊՐԱՆՔԱՑԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ
1.	GENbox անաէրոբ գազային գեներատոր	Անաէրոբ գեներատոր 2.5 լ էքսիկատորի համար 10 հատ տուփում, գործարանային փաթեթավորմամբ	Genbox anaer	BioMerieux	Ճապոնիա
2.	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր	միկրոաէրոֆիլ գեներատոր, 2.5 լ էքսիկատորի համար, 10 հատ տուփում, գործարանային փաթեթավորմամբ	Genbox microaer	BioMerieux	Ճապոնիա
3.	chromID CPS 3 ագար մեզի քրոմոգեն միջավայր	Մեզի մանրէաբանական հետազոտման քրոմոգեն միջավայր chromID CPS Elite 20 պետրիի թասիկ, գործարանային փաթեթավորմամբ	chromID CPS ELITE	BioMerieux	Իսպանիա
4.	Վագիթեսթ	Տրանսպորտային միջավայր ուրոգենիտալ քսուքներում գոնոկոկերի աճեցման համար, 10 հատ սլայդ, գործարանային փաթեթավորմամբ	Vagitest	Liofilchem	Իտալիա
5.	Հոմոցիստեին 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Homocysteine 100Tests, cobas c,Integra	Roche Diagnostics	Գերմանիա
6.	Դ-Դիմեր Gen 2 D-DI 100թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	D-Dimer Gen.2, 100Test, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
7.	Դ-Դիմեր Gen 2 կալիբրատորի հավաք 6 X0.5 մլ	Հավաքածուն պարունակում է 6x0.5մլ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	D-Dimer Gen.2 Calibrator Set	Roche Diagnostics	Գերմանիա
8.	Կալցիտոնին 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Calcitonin Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
9.	NSE-Նեյրոսպեցիֆիկ էնոլազա 100թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեստ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	NSE Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
10.	Պրո-GRP 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեստ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	proGRP Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
11.	HE4 100թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեստ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	HE4 Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա

12.	**Հակամյուլերային հորմոն 100թեսթ**	**Հավաքածուն պարունակում է 100 թեստ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:**	**AMH Elecsys cobas e 100**	**Roche Diagnostics**	**Գերմանիա**
13.	Կալցիտոնին CS	Կալիբրատորը **նախատեսված համապատասխան ռեագենտի համար,** գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Calcitonin CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
14.	NSE-Նեյրոսպեցիֆիկ CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	NSE CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
15.	Պրո-GRP CS	Հավաքածուն պարունակում է 4x1 մլ քանակությամբ թեստ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	proGRP CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
16.	HE4 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	HE4 CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
17.	Ցիտոմեգալովիրուս 1X50LC Nano	Նախատեսված LC Nano անալիզատորի համար; ֆորմատ՝ 50 տեստ; նախատեսված է in-vitro ախտորոշման համար; պարունակում է նուկլեինաթթուների էքստրակցիայի և ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ;	GeneProof Cytomegalovirus (CMV) PCR kit	GeneProof	Չեխիա
18.	Ստերիլ փորձանոթներ	փորձանոթ մանրէաբանական հետազոտությունների վերցման և կատարման համար, 16*100մմ, 10մլ տարողությամբ, ստերիլ գործարանային փաթեթավորումով	STERILE PS CYLINDRICAL TEST TUBES 16x 100 MM 10ML	Kima	Իտալիա
19.	Հակաբիոտիկի դիսկ Լինկոմիցին	հակաբիոտիկային դիսկ, սրվակում 50 հատ, գործարանային փաթեթավորումով տուփ	LINCOMYCIN	Liofilchem	Իտալիա
20.	Հակաբիոտիկի դիսկ Նիստատին	հակաբիոտիկային դիսկ, սրվակում 50 հատ, գործարանային փաթեթավորումով տուփ	NYSTATIN NY	Liofilchem	Իտալիա
21.	Հակաբիոտիկի դիսկ Կետոկոնազոլ	հակաբիոտիկային դիսկ, սրվակում 50 հատ, գործարանային փաթեթավորումով տուփ	KETOCONAZOLE	Liofilchem	Իտալիա
22.	Հակաբիոտիկի դիսկ Կլոտրիմազոլ	հակաբիոտիկային դիսկ, սրվակում 50 հատ, գործարանային փաթեթավորումով տուփ	CLOTRIMAZOLE	Liofilchem	Իտալիա
23.	Կասետ-NaOH-D (c-pack)	66 մլ քանակությամբ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	NaOH-D, cobas c	Roche Diagnostics	Գերմանիա

24.	**Կասետ SMS (c-pack)**	**50մլ քանակությամբ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:**	**SMS, cobas c**	**Roche Diagnostics**	**Գերմանիա**
25.	Լուծիչ9 % NaCl Diluent (c-pack)	**9 % NaCl 50մլ քանակով, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:**	**NACl 9% Dil, cobas c**	Roche Diagnostics	Գերմանիա
26.	Լվացող հեղուկ Detergent 1 NaOH –D(2 X 1.8 l)	2x1.8 լ քանակով, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Cell Wash Solution I/NaOH-D 2x1,8 L	Roche Diagnostics	Գերմանիա
27.	Լվացող թթու հեղուկ- Detergent 2 2 X 1.8 l	2x1.8 լ քանակով, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Acid wash Solution 2x1,8 L	Roche Diagnostics	Գերմանիա
28.	Sample Cleaner 1 12x59 ml	12x59 մլ քանակով, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Sample Cleaner 1, cobas c	Roche Diagnostics	Գերմանիա
29.	Նմուշի լվացող հեղուկ-Sample Cleaner 2 (SMS/Acid wash) 12x66 ml	12x66 մլ քանակությամբ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	SMS Solution for HIT 917	Roche Diagnostics	Գերմանիա
30.	Էկոտերջենտ-Ecotergent (59 ml X 12)	59 մլ X 12 քանակությամբ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	EcoTergent, cobas c501/502, 12x59 ml	Roche Diagnostics	Գերմանիա
31.	HbA1c հեմոլիզացնող ռեագենտ. Whool blood 51 մլ	51 մլ քանակով,գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	HbA1c TQ haemolyzing rgt, cobas c	Roche Diagnostics	Գերմանիա
32.	SI2 Սիճուկային ինդեքս 2750թեսթ	Հավաքածուն պարունակում է 2750 թեստ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	NACl 9% SI Gen.2, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
33.	ISE Դեպրոտեինայզեր, 6x21 ml	6x21 մլ քանակությամբ, գործարանային փաթեթավորմամբ	ISE DEPROTEINIZER cobas integra (6x21ML)	Roche Diagnostics	Գերմանիա
34.	Ակտիվատոր 9X 12	9x12մլ քանակությամբ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000, Cobas Integra 400+, c111 անալիզատորների շահագործումը ապահովելու համար:	Activator for cobas c,Integra,c111	Roche Diagnostics	Գերմանիա
35.	Նմուշի ստուգիչ-cobas Integra Check Sample 25 մլ	25 մլ քանակությամբ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	cobas Integra Check Sample	Roche Diagnostics	Գերմանիա
36.	Միկրոբաժակներ	Հավաածուն պարունակում է 5000 հատ միկրոբաժակ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: Գործարանային փաթեթավորմամբ	Cobas sample cup 5000pcs	Roche Diagnostics	Ավստրիա
37.	Սարքի ստուգիչ թեսթ կասետ INSTC	65 թեսթ քանակությամբ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	INSTC, 65 Tests, cobas c	Roche Diagnostics	Գերմանիա

38.	**Խնամքի հավաք Cobas 6000-ի** կես տարվա համար (c-501, e-601)	**Cobas 6000 համար անալիզատորի կես տարվա խնամքի համար** նախատեսված հավաքածու, պարունակում է մխոցների ներդիրները և սիլիկոնե խողովակները	**KIT MAINTENANCE MODULAR E/E601; C501 MAINTENANCE KIT 1**	**Roche Diagnostics**	**Ճապոնիա**
39.	Ստուգիչ կասետ	Հավաքածուն պարունակում է 300թեսթ, գործարանային փաթեթավորմամբ	cobas Integra Check Cassette	Roche Diagnostics	Գերմանիա
40.	Լվացող կասետ	Հավաքածուն պարունակում է 150թեսթ, գործարանային փաթեթավորմամբ, նախատեսված է Cobas Integra 400+ լաբորատոր անալիզատորի համար	cobas Integra Cleaner 150Tests	Roche Diagnostics	Գերմանիա
41.	Լվացող լուծույթ 1 x 1000 մլ	1 x 1000 մլ քանակությամբ, գործարանային փաթեթավորմամբ, նախատեսված է Cobas Integra 400+ լաբորատոր անալիզատորի համար	cobas Integra Cleaner	Roche Diagnostics	Գերմանիա
42.	9% NaCL լուծիչ	9%, 6 x 22 մլ քանակությամբ, գործարանային փաթեթավորմամբ, նախատեսված է Cobas Integra 400+ լաբորատոր անալիզատորի համար	cobas Integra NACl Diluent 9 %	Roche Diagnostics	Գերմանիա

- Ապրանքները պետք է ունենան

1. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագիր, որի պատճենը ներկայացվում է մատակարարման ժամանակ:

2.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը: (ներկայացվում է մատակարարման ժամանակ):

3.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

Այն չափաբաժինները, որոնց չափման միավորը սահմանված է «տուփ» կամ «հավաքածու» և նշված չէ քանակական պարունակությունը հասկանալ N1

Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի գին/ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումն ըստ 2018թ. հետևյալ եռամսակների	
						Երրորդ եռամսյակ	Չորրորդ եռամսյակ Ոչ ուշ քան 10.12.2018թ.
1.	GENbox անաէրոբ գազային գեներատոր	հավաքածու	3	18,000	54,000	1	2
2.	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր	հավաքածու	3	19,000	57,000	1	2
3.	chromID CPS 3 ազար մեզի քրոմոգեն միջավայր	հավաքածու	50	32,000	1,600,000	25	25
4.	Վագիթեսթ	հավաքածու	2	15,000	30,000		2
5.	Հոմոցիստեին 100 թեսթ	հավաքածու	2	378,000	756,000	1	1
6.	Դ-Դիմեր Gen 2 D-DI 100թեսթ	հավաքածու	3	272,000	816,000	1	2
7.	Դ-Դիմեր Gen 2 կալիբրատորի հավաք 6 X0.5 մլ	հավաքածու	4	93,000	372,000	2	2
8.	Կալցիտոնին 100 թեսթ	հավաքածու	1	285,000	285,000	1	
9.	NSE-Նեյրոսպեցիֆիկ էնոլազա 100թեսթ	հավաքածու	1	82,000	82,000	1	
10.	Պրո-GRP 100 թեսթ	հավաքածու	1	360,000	360,000	1	
11.	HE4 100թեսթ	հավաքածու	1	285,000	285,000	1	
12.	Հակամյուլերային հորմոն 100թեսթ	հավաքածու	1	600,000	600,000	1	
13.	Կալցիտոնին CS	հավաքածու	1	272,000	272,000	1	
14.	NSE-Նեյրոսպեցիֆիկ CS	հավաքածու	1	30,000	30,000	1	
15.	Պրո-GRP CS	հավաքածու	1	262,000	262,000	1	
16.	HE4 CS	հավաքածու	1	30,000	30,000	1	
17.	Ցիտոմեգալովիրուս 1X50LC Nano	տուփ	1	305,000	305,000	1	
18.	Ստերիլ փորձանոթներ	հատ	500	54	27,000	250	250
19.	Հակաբիոտիկի դիսկ Լինկոմիցին	տուփ	2	1,350	2,700	1	1
20.	Հակաբիոտիկի դիսկ Նիստատին	տուփ	2	1,350	2,700	1	1
21.	Հակաբիոտիկի դիսկ Կետոկոնազոլ	տուփ	2	1,350	2,700	1	1
22.	Հակաբիոտիկի դիսկ Կլոտրիմազոլ	տուփ	2	1,350	2,700	1	1
23.	Կասետ-NaOH-D (c-pack)	հավաքածու	30	5,340	160,200	10	20
24.	Կասետ SMS (c-pack)	հավաքածու	1	13,480	13,480	1	
25.	Լուծիչ9 % NaCl Diluent (c-pack)	հավաքածու	6	8,950	53,700	3	3
26.	Լվացող հեղուկ Detergent 1 NaOH –D(2 X 1.8 l)	հավաքածու	15	20,490	307,350	5	10
27.	Լվացող թթու հեղուկ- Detergent 2 2 X 1.8 l	հավաքածու	2	41,620	83,240	1	1
28.	Sample Cleaner 1 12x59 ml	հավաքածու	4	34,000	136,000	2	2
29.	Նմուշի լվացող հեղուկ-Sample Cleaner 2 (SMS/Acid wash) 12x66 ml	հավաքածու	2	11,540	23,080	1	1
30.	Էկոտերջենտ-Ecotergent (59 ml X 12)	հավաքածու	6	250,000	1,500,000	3	3
31.	HbA1c հեմոլիզացնող ռեագենտ. Whool blood 51 մլ	հավաքածու	7	32,000	224,000	3	4
32.	SI2 Սիճուկային ինդեքս 2750թեսթ	հավաքածու	2	20,000	40,000	1	1
33.	ISE Դեպրոտեինայզեր, 6x21 ml	հավաքածու	3	9,000	27,000	1	2

34.	**Ակտիվատոր 9X 12**	**հավաքածու**	**5**	**34,000**	**170,000**	**2**	**3**
35.	Նմուշի ստուգիչ-cobas Integra Check Sample 25 մլ	**հատ**	**2**	13,000	**26,000**	**1**	1
36.	Միկրոբաժակներ	հավաքածու	22	45,710	1,005,620	10	12
37.	Սարքի ստուգիչ թեսթ կասետ INSTC	հավաքածու	2	15,530	31,060	1	1
38.	Խնամքի հավաք Cobas 6000-ի կես տարվա համար (c-501, e-601)	տուփ	1	**311,000**	**311,000**	**1**	
39.	Ստուգիչ կասետ	հավաքածու	1	13,000	13,000	1	
40.	Լվացող կասետ	հավաքածու	1	2,380	2,380	1	
41.	Լվացող լուծույթ 1 x 1000 մլ	հավաքածու	20	13,700	274,000	10	10
42.	9% NaCL լուծիչ	հավաքածու	2	15,000	30,000	1	1
Ընդամենը՝					**10,664,910**		

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/28-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանումը	CPV կոդ	Ընդհանուր գին /դրամ/	Ըստ 2018թ ամիսների՝ աճողական					
				հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.18թ.-ը
1.	GENbox անաէրոբ գազային գեներատոր	33691162/249/10/4	54,000	18,000	18,000	18,000	54,000	54,000	54,000
2.	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր	33691162/250/10/4	57,000	19,000	19,000	19,000	57,000	57,000	57,000
3.	chromID CPS 3 ազար մեզի քրոմոգեն միջավայր	33691162/252/10/4	1,600,000	800,000	800,000	800,000	1,600,000	1,600,000	1,600,000
4.	Վազիթեսթ	33691162/258/10/4	30,000	0	0	0	30,000	30,000	30,000
5.	Հոմոցիստեին 100 թեսթ	33691162/263/10/4	756,000	378,000	378,000	378,000	756,000	756,000	756,000
6.	Դ-Դիմեր Gen 2 D-DI 100թեսթ	33691162/264/10/4	816,000	272,000	272,000	272,000	816,000	816,000	816,000
7.	Դ-Դիմեր Gen 2 կալիբրատորի հավաք 6 X0.5 մլ	33691162/266/10/4	372,000	186,000	186,000	186,000	372,000	372,000	372,000
8.	Կալցիտոնին 100 թեսթ	33691162/268/10/4	285,000	285,000	285,000	285,000	285,000	285,000	285,000
9.	NSE-Նեյրոսպեցիֆիկ էնոլազա 100թեսթ	33691162/269/10/4	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000	82,000
10.	Պրո-GRP 100 թեսթ	33691162/270/10/4	360,000	360,000	360,000	360,000	360,000	360,000	360,000
11.	HE4 100թեսթ	33691162/271/10/4	285,000	285,000	285,000	285,000	285,000	285,000	285,000
12.	Հակամյուլերային հորմոն 100թեսթ	33691162/272/10/4	600,000	600,000	600,000	600,000	600,000	600,000	600,000
13.	Կալցիտոնին CS	33691162/275/10/4	272,000	272,000	272,000	272,000	272,000	272,000	272,000
14.	NSE-Նեյրոսպեցիֆիկ CS	33691162/276/10/4	30,000	30,000	30,000	30,000	30,000	30,000	30,000
15.	Պրո-GRP CS	33691162/277/10/4	262,000	262,000	262,000	262,000	262,000	262,000	262,000
16.	HE4 CS	33691162/279/10/4	30,000	30,000	30,000	30,000	30,000	30,000	30,000
17.	Ցիտոմեգալովիրուս 1X50LC Nano	33691162/280/10/5	305,000	305,000	305,000	305,000	305,000	305,000	305,000
18.	Ստերիլ փորձանոթներ	33691162/281/10/2	27,000	13,500	13,500	13,500	27,000	27,000	27,000
19.	Հակաբիոտիկի դիսկ Լինկոմիցին	33691162/288/10/5	2,700	1,350	1,350	1,350	2,700	2,700	2,700
20.	Հակաբիոտիկի դիսկ Նիստատին	33691162/294/10/5	2,700	1,350	1,350	1,350	2,700	2,700	2,700
21.	Հակաբիոտիկի դիսկ Կետոկոնազոլ	33691162/295/10/5	2,700	1,350	1,350	1,350	2,700	2,700	2,700
22.	Հակաբիոտիկի դիսկ Կլոտրիմազոլ	33691162/296/10/5	2,700	1,350	1,350	1,350	2,700	2,700	2,700
23.	Կասետ-NaOH-D (c-pack)	33691167/1/10/4	160,200	53,400	53,400	53,400	160,200	160,200	160,200
24.	Կասետ SMS (c-pack)	33691167/2/10/4	13,480	13,480	13,480	13,480	13,480	13,480	13,480
25.	Լուծիչ9 % NaCl Diluent (c-pack)	33691167/3/10/4	53,700	26,850	26,850	26,850	53,700	53,700	53,700
26.	Լվացող հեղուկ Detergent 1 NaOH –D(2 X 1.8 l)	33691167/4/10/4	307,350	102,450	102,450	102,450	307,350	307,350	307,350
27.	Լվացող թթու հեղուկ- Detergent 2 2 X 1.8 l	33691167/5/10/4	83,240	41,620	41,620	41,620	83,240	83,240	83,240
28.	Sample Cleaner 1 12x59 ml	33691167/6/10/4	136,000	68,000	68,000	68,000	136,000	136,000	136,000
29.	Նմուշի լվացող հեղուկ-Sample Cleaner 2 (SMS/Acid wash) 12x66 ml	33691167/7/10/4	23,080	11,540	11,540	11,540	23,080	23,080	23,080
30.	Էկոտերջենտ-Ecotergent (59 ml X 12)	33691167/8/10/4	1,500,000	750,000	750,000	750,000	1,500,000	1,500,000	1,500,000
31.	HbA1c հեմոլիզացնող ռեագենտ. Whool blood 51 մլ	33691167/9/10/4	224,000	96,000	96,000	96,000	224,000	224,000	224,000
32.	SI2 Սիճուկային ինդեքս 2750թեսթ	33691167/11/10/4	40,000	20,000	20,000	20,000	40,000	40,000	40,000

33.	ISE Դեպրոտեինայզեր, 6x21 ml	33691167/13/10/4	27,000	9,000	9,000	9,000	27,000	27,000	27,000
34.	Ակտիվատոր 9X 12	33691167/14/10/4	170,000	68,000	68,000	68,000	170,000	170,000	170,000
35.	Նմուշի ստուգիչ-cobas Integra Check Sample 25 մլ	33691167/15/10/2	26,000	13,000	13,000	13,000	26,000	26,000	26,000
36.	Միկրոբաժակներ	33691167/19/10/4	1,005,620	457,100	457,100	457,100	1,005,620	1,005,620	1,005,620
37.	Սարքի ստուգիչ թեսթ կասետ INSTC	33691167/20/10/4	31,060	15,530	15,530	15,530	31,060	31,060	31,060
38.	Խնամքի հավաք Cobas 6000-ի կես տարվա համար (c-501, e-601)	33691167/21/10/5	311,000	311,000	311,000	311,000	311,000	311,000	311,000
39.	Ստուգիչ կասետ	33691167/23/10/4	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000	13,000
40.	Լվացող կասետ	33691167/24/10/4	2,380	2,380	2,380	2,380	2,380	2,380	2,380
41.	Լվացող լուծույթ 1 x 1000 մլ	33691167/25/10/4	274,000	137,000	137,000	137,000	274,000	274,000	274,000
42.	9% NaCL լուծիչ	33691167/26/10/4	30,000	15,000	15,000	15,000	30,000	30,000	30,000
Ընդամենը՝			**10,664,910**	**6,427,250**	**6,427,250**	**6,427,250**	**10,664,910**	**10,664,910**	**10,664,910**

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-9/28-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

նագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

նագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
նագրի համարը՝ _____
ատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
» « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
ագրությունը հետևյալի մասին.
նագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						
	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

ույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը
ության եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-9/28-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն